

## Ֆինանսական օգնության ծրագրերի ամփոփում

Dignity Health-ի Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ նկարագրված են ֆինանսական օգնության ծրագրերը, որոնք հասանելի են չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդների համար, որոնք բավարարում են որոշակի պահանջներն ըստ եկամտի՝ Dignity Health-ի կողմից ստացած անհրաժեշտ բժշկական ծառայությունների համար վճարելու համար: Չապահովագրված հիվանդը՝ դա այն անձն է, որը չունի բժշկական ապահովագրություն՝ չի օգտվում մասնավոր ապահովագրությունից կամ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրից, և որն իրավունք չունի փոխհատուցում ստանալու հիվանդանոցային հաշվի համար: Ոչ բավարար ապահովագրություն ունեցող հիվանդը, դա այն անձն է, որն ունի բժշկական ապահովագրություն, սակայն ունի բարձր հիվանդանոցային հաշիվներ, որոնք մասամբ փոխհատուցվում են ապահովագրական ընկերության կողմից:

### Անվճար խնամք՝

- Եթե դուք չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի՝ կազմում է մինչև 250%, դուք կարող եք անհատույց հիվանդանոցային ծառայությունները ստանալու իրավունք ունենալ:

### Ջեղչված խնամք

- Եթե դուք չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան տարեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի՝ կազմում է 250-350%, ապա դուք կարող եք իրավունք ունենալ ձեռք բերել հիվանդանոցային ծառայությունների հաշիվները նվազեցնել մինչև այն առավել մեծ հիմնավորված գումարը, որը կարող է վճարվել պետության կողմից, որը սովորաբար վճարվում է Medicare-ի կողմից մասնատիպ ծառայությունների համար:
- Եթե դուք չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան տարեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի՝ կազմում է 350-500%, ապա դուք կարող եք իրավունք ունենալ ձեռք բերել հիվանդանոցային ծառայությունների հաշիվները նվազեցնել մինչև կանոնավոր հավաքագրվող գումարը (Amount Generally Billed)՝ Դաշնային օրենքով սահմանված գումար, որն արտացոլում է այն գումարը, որը փոխանցվում է հիվանդանոց մասնավոր ապահովագրական ընկերություններից և Medicare-ից (ներառյալ համավճարները և չփոխհատուցվող նվազեցման գումարները) անհրաժեշտ բժշկական ծառայությունների համար:

Եթե դուք մեր Ֆինանսական օգնության քաղաքականության ներքո ֆինանսական օգնություն ստանալու իրավունք ունեք, ապա դուք պարտավորված չեք լինելու վճարել ավելին, քան ստորև նկարագրված կանոնավոր հավաքագրվող գումարը (Amount Generally Billed): Որակավորվելու դեպքում դուք կարող եք նաև առանց տոկոսագումարի ընդլայնված վճարման պլանի համար դիմել:

Դուք երբևիցե պարտավորված չեք լինելու կանխավճար կատարել կամ այլ վճարային մեխանիզմներից օգտվել՝ շտապ օգնություն ստանալու համար: Հիվանդանոցի Ֆինանսական օգնության քաղաքականության և ֆինանսական օգնության հայտարարների անվճար պատճենները հասանելի են

հիվանդանոցի ստորև նշված վեբ կայքում կամ մուտքի մոտ գտնվող ընդունման կետերում: (Հետևեք “Admitting” ընդունման կետ, կամ “Registration” գրանցման կետ, նշաններին): Այդ փաստաթղթերի պատճեններն ըստ պահանջի կարող են նաև փոստով ուղարկվել ձեզ, եթե գանգահարեք ձեր հիվանդանոցի Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին ստորև նշված հեռախոսահամարով:

**Traducción disponible:** Այդ փաստաթղթերը կարող եք նաև ձեռք բերել իսպանական և այլ լեզուներով ձեր հիվանդանոցի վեբ կայքում, հիվանդանոցի ընդունման կետում կամ գանգահարելով հիվանդանոցի հեռախոսահամարով:

Dignity Health-ի Ֆինանսական խորհրդատուները կարող են պատասխանել ձեր հարցերին, տրամադրել տեղեկատվություն մեր ֆինանսական օգնության քաղաքականության մասին և օգնել ձեզ ֆինանսական օգնության համար դիմելու գործընթացին: Մեր աշխատակազմը գտնվում է հիվանդանոցի ընդունման կետում, որտեղ կարող եք գանգահարել նաև ստորև նշված հեռախոսահամարով:

**Dominican Hospital** 1555 Soquel Dr, Santa Cruz, CA 95065 | **Ֆինանսական խորհրդատվության բաժին** 831-462-7831  
**Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին** 831-457-7001 | [www.dignityhealth.org/dominican/paymenthelp](http://www.dignityhealth.org/dominican/paymenthelp)

**Sequoia Hospital** 170 Alameda de las Pulgas, Redwood City, CA 94062

**Ֆինանսական խորհրդատվության բաժին** 650-367-5551 | **Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին** 888-488-7667  
[www.dignityhealth.org/sequoia/paymenthelp](http://www.dignityhealth.org/sequoia/paymenthelp)

**Saint Francis Memorial Hospital** 900 Hyde St, San Francisco, CA 94109

**Ֆինանսական խորհրդատվության բաժին** 415-353-6136 | **Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին** 888-488-7667  
[www.dignityhealth.org/saintfrancis/paymenthelp](http://www.dignityhealth.org/saintfrancis/paymenthelp)

**St. Mary's Medical Center** 450 Stanyan St, San Francisco, CA 94117

**Ֆինանսական խորհրդատվության բաժին** 415-750-5817 | **Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին** 888-488-7667  
[www.dignityhealth.org/stmarys/paymenthelp](http://www.dignityhealth.org/stmarys/paymenthelp)